Տ Ա Թ Ե Վ Գ Ի Տ Ա Կ Ր Թ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ի Ր

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության առարկա՝ Մայրենի

Հետազոտության թեմա՝ Դասի կատարելագործումը ուսուցման ակտիվ ձևերի ներդրման հիմքով:

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Վոլոդյայի Միրիբյան

Երևանի Նվեր Սաֆարյանի անվան հ 164 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԳԼՈՒԽ 1. ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ .....……4

1.1 Ինչ է ակտիվ ուսուցումը/ ուսումնառությունը.....7

1.2. Ինչ է ուսուցման կառուցողական մոտեցումը:.....…8

ԳԼՈՒԽ 2.Ակտիվ ուսուցման նպատակներն ու խնդիրները:.....9

2.1.Ինչպես սովորեցնել և ինչպես կազմակերպել ակտիվ ուսուցում 10

2.2. Քննադատական մտածողություն ……11

2.3. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ.....12

ԳԼՈՒԽ 3.ԽԱՂԸ՝ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱԿՏԻՎ.....15

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎ

3.2 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....18

3.3 ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխան ոչ թե դատարկ սափոր է, որը պետք է լցնել,

այլ ջահ է, որը պետք է վառել:

Մարկոս Ֆաբիոս Քվինթիլիանո

Ակտիվ ուսուցումը միաժամանակ և նոր , և հին մանկավարժական գաղափար է; Դա է պատճառը,որ այսօր չափազանց արդիական ու նոր այս գաղափարը ներկայացնելուհամար ընտրել եմ դասական բնաբան: Մանկավարժության պատմության մեջ հայտնի ն այս մոտեցման զարգացման հունահռոմեական տարբերակները, օրինակ՝Սոկրատեսի առաջարկած ուսուցման /էվրիստիկ/ կամ սոկրատյան հարցադրումների մեթոդը; Այդ շարքում կարելի է նշել և Պլուտարքոսի ,և Մարկոս Ֆաբիոս Քվինթիլիանոսի զարգացրած մոտեցումները, որոնցից վերջինիս հայտնի միտքն է էլ խորագիր եմ դարձրել այս գլխի համար:

Արդի մանկավարժության գերխնդիրներից մեկը ուսուցման-ուսումնառության ակտիվացման և արդյունավեըության բարձրացման եղանակների որոնումն է: Այս խնդրի լուծումը,բնականաբար,երկարատև գործընթաց է, որին ձեռնամուխ է եղել համաշխարհային մանկավարժական հանրությունը;

Այսօր արդեն ձևավորվել են մի շարք մոտեցումներ ,որոնք կարող ենք անվանել անձին ուղղված, անձնակենտրոն, զարգացնող ուսուցման տեխնոլոգիաներ: Ժամանակակից մանկավարժությանը հայտնի են ուսուցման մի շարք տեսություններ՝ իրենց տեխնոլոգիաներով, որոնց թվին են պատկանում Լ.Վ.Զանկովի՝տարրական դպրոցի դիդակտիկական համակարգի տեխնոլոգիան, Լ.Բ.Էկլոնի -Վ.Վ.Դավիդովի՝ զարգացնող ուսուցման տեխնոլոգիան, Վ.Ս.Բիբլերի՝/մշակույթների երկխոսության/ տեխնոլոգիան, Ծ.Ամոնաշվիլու տարրական դպրոցի աշակերտների զարգացման համագործակցային սկզբունքը, Ս.Մանուկյանի՝ նպատակահարույց ուսուցման տեխնոլոգիան,Ա.Գ. Ռիվինի՝կոլեկտիվ փոխուսուցման տեխնոլոգիանԾ.Ամոնաշվիլու տարրական դպրոցիաշակերտների զարգացման համագործակցային սկզբունքը; Դրա հետ մեկտեղ այսօր ձևավորվել է ակտիվ ուսուցման մոտեցումը, որը փորձում է իմի բերել ժամանակակից մանկավորժական նվաճումները , գիտական որոնումների արդյունքում ստեղծված մոտեցումները;

ԳԼՈՒԽ 1. ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

1.1 **Ինչ է ակտիվ ուսուցումը/ ուսումնառությունը**

Կարող ենք ձիուն տոնել աղբյուրի մոտ,

բայց չենք կարող ջուր խմեցնել նրան:

Ժաղովրդական ասացվածք

Ժամանակակից մանկավարժության մեջ ակտիվ ուսուցումը միանշանակ ընդունված ձևակերպում չունի:

/Մանկավարժական բառարան/ Ինչ են հասկանում մանկավարժները, երբ ասում են.Ակտիվ ուսուցում է կոչվում ցանկացած իրավիճակ,երբ աշակերտները սովորում են շարժվելով, ինչ-որ բան անելով, ինչպես նաև,երբ

նստած կարդում են, գրում կամ պարզապես լսում ուսուցչին, սակայն ակտիվ է ընկալումը, ողջ ուսուցման գործընթացը: Եթե սովորելու ընթացքում աշակերտներն ակտիվ աշխատանքի մեջ են,նրանք չեն կարող իրենց ուժերի չափով լիովին ընդգրկվել ուսումնական աշխատանքի մեջ;

Փոքր ինչ այլ է Ռայան Քուպերի ձևակերպումը: Նա համարում է,որ / Ակտիվ է այն ուսուցումը,որի ժամնակ աշակերտն ինքն է կառավարում իր ուսումնառության ընթացքը, և կամ դրական հույզեր են միանում նրա ուսումնառությանը:/

Այսպիսով, ակտիվ ուսուցումն ունի միշարք առանձնահատկություններ.

- Ակտիվ է այն ուսուցումը, երբ սովորողները նոր գաղափարներ յուրացնելու համար օգտագործում են իրենց մտավոր ունակությունները, աշխատեցնում են իրենց միտքը ուսումնական խնդիրներ լուծելու համար և կարողանում են կիրառել ձեռք բերած գիտելիքները;

Երբ ուդուցումն ակտիվ է, աշակերտները կարողանում են ավելի շատ բան անել,ներդնել իրենց մտվոր հնարավորություններն ու ներուժը, ոչ միայն գաղափարներ, հասկացություններ են յուրացնում, այլ նաև դովորում են հարցեր, հիմնախնդիրներ լուծելիս կիրառել ձեռք բերած գիտելիքները: Ակտիվ ուսուցումն արդյունավետէ, հետաքրքրքշարժ, երեխաները սովորում են համագործակցելով աշխատել իրար հետ՝ ընդգրկելով դասարանի բոլոր աշակերտներին; Ակտիվ է այն ուսուցումը,որը խթանում է լավ սովորել դասանյութը, յուրացնել այն, լսել, տեսնել, հարցեր տալ և քննարկել այն մյուսների հետ, ինչպես նաև կարողանալ ինքնուրույն կիրառել, ներդնել գիտելիքները / պատրաստել նմուշօրինակ, նկարել, գծագրել և այլն /;

- Ակտիվ է այն ուսուցումը, երբ սովորողները պատասխանատվություն են ստանձնում իրենց ուսումնառության համար:
  Իր ուսումնառության համար պատասխանատու սովորողն ավելիգործնական է դառնում, սովորում է ինքնուրույն որոշումներ կայացնել, ինքն է որոշում, թե ինչ սովորի, ինչպես սովորի, ինչ կարողանա անել; Սովորելը նրա համար դառնում է նաև ինքնքկառավարման, ինքնքխթանման միջոց, ինչը բարձրացնում է

ուսման արդյունավետությունը, իր փոխներգործուն ազդեցությունն է ունենում դասի որակի կատարելագործման հարցում;

Ակտիվ է այն ուսուցումը, երբ սովորողն ինքն է կառուցում իր գիտելիքները իր կարողությունների, մտավոր ընդունակությունների համապատասխան և ստուգում է իր ընտրած մեթոդի արդյունավետությունը;

Ակտիվ ուսուցման ժամանակ սովորողն ինքն է ձևավորում իր ուսումնական մոդելը,ապա փորձարկում, կիրառում և ստուգում է դրա արդյունավետությունը:

- Ակտիվ է այն ուսուցումը,երբ սովորողն առավելագույնս է ներգրավված դասի ընթացքի, նյութի հետազոտության մեջ, դասարանում ավելի շատ համագործակցում է, ավելի քիչ մրցակցում, երբ սովորողները պարզապես աշխատում են միասին:
- Ակտիվ է այն ուսուցումը, երբ սովորողն ինքն է յուրացնում ուսումնական նյութը: Ուսուցիչն այդ պարագայում միայնսովորեցնում է նրան,թե ինչպեսպետք է մոտենալ խնդրի լուծման, ինչպես է գործում այս կամ այն օրենքըտվյալ առարայի տեսանկյունից, նա հանձնարարություններ է տալիս և ուղղորդում, օգնում էաշակերտին, դրանք կատարելիս:

Ակտիվ է այն ուսուցումը,երբ սավարողը դրվում է մի այնպիսի իրավիճակի մեջ, որ ինքն է ցանկություն հատնում կարդալ,խոսել, լսել, խորհրդակցել, մտորել, խորհել,խնդիրներ լուծել և գրել: Սավորողներն այդ ընթացքում այնպիսի բարդ, մտավոր, տրամաբանական գործողություններ են կատարում, ինչպիսիք են վերլուծությունը, համադրումը, գնահատումը: Սովորողը ոչ միայն ուսումնական աշխատանք է կատարում, այլ նաև մտածում է իր կատարած աշխատանքի մասին:

- Ակտիվ է այն ուսուցումը,երբ սովորողը հնարավորություն ունի նոր տեղեկությունները համակցել ունեցած գիտելիքների, կարողությունների,կենսափորձի և իրմտավոր հնարավորությունների հետ, ստեղծեիր մտավոր կառույցը:

Սովորողն այդ ժամանակիր սովորածը վերարտադրում է սեփական բառերով, վերապատմում, կրկնում և կիրառում;

- Ակտիվ է այն ուսուցումը, երբ ուսուցիչը միայն ուսումնոկոն հնարավորություն է ստեղծում, իսկ աշակերտները դառնում են ակտիվ սովորող և երկխոսության մեջ են մտնում ինչպես մյուս աշակերտների, այնպես էլ ուսուցչի հետ:
- Ակտիվ է այն ուսուցումը, երբ սովորողը առավելագույնս ընդգրկված է հարցի քննարկման՝ /քննադատական մտածողություն/և արդյունավետ ուսուցման մեջ,երբ նա /տարված է ուսումնական աշխատանքով/:
- Ակտիվ է այն ուսուցումը, երբ գիտելիքները բխում են փորձից, ինքնուրույն /կառուցվում են/ աշակերտի կողմից, երբ աշակերտը կարողանում է այդ գիտելիքները կիրառել, փորձարկել, քննել և քննարկել: Այսպիսով, ակտիվ ուսուցումն առավելապես միտված է ուսուցման ոչ թե արտաքին,,այլ ներքին կողմին: Սակայն ակտիվ ուսուցման առկայությունն ունի նաև արտաքին դրսևորումներ: Ժամանակակից մանկավարժության մեջ /ակտիվ ուսուցում/ տերմինն առավելապես կապվում է կառուցողականության կոնստրուկտիվրիզմի հետ:

1.2. Ինչն է ուսուցման կառուցողական մոտեցումը

ՈՒսուցման մոդելի, ուսուցման ուսուցման ձևերի քննարկումը միշտ էլ բերում է ուսուցման նպատակների հարցի քննարկմանը;

Ավանդական մանկավարժությունն ուսումնառության գործընթացը հանգեցնում է որոշակի գիտելիքների հանրագումարի պարզ յուրացման: Այսինքն ուսուցման նպատակը ըստ նրա գիտելիքներ հաղորդելն է,կրթության բովանդակությունն իրականացնելը;

Իսկ այդ նպատակին դպրոցական կրթությունը հասնում է տարբեր եղանակներով՝ մեխանիկական մտապահումից մինչև այդ գիտելիքներն

ինքնուրույն հայթայթելն ու ստեղծելը: Այսինքն ավանդական ուսուցման հիմնական նպատակը եղել է սկզբում եղել է գիտելիքների հաղորդումը;

Սակայն ժամանակակից կառուցողական մոտեցումը ուսուցում-ուսումնառությունը դիտարկում է, որպես հասարակական և մշակութային ակտիվություն, համարելով գիտելիքները խիստ անհատական և սովորողները պատկերացում են կազմում այս կամ այն երևույթի մասին,իրենց փորձի, մյուսների հետ համագործակցելու միջոցով:Այստեղ ուսուցման, ուսումնառության հիմնական նպատակն է հանդիսանում օգնել երեխային՝ գտնել իր տեղը այն հասարակության մեջ, որտող ապրելու է, նպաստել նրա ինքնագործունեությանը: Ուստի այս պարագայում առաջնային են դառնում ուսուցման կազմակորպման ձևերն ու մեթոդները;

Տվյալ դեպքում վերջիններս պայմանավորված են լինում ոչ միայն ուսուցման բովանդակությամբ, այլ նաև սովորողի հնարավորություններով; Ուսուցման բովանդակությունը նույնպես կարող է ենթորկվել փոփոխության; Ժամանակակից ուսուցման մոտեցումն առավելագույնս միտված է սովորողին ը նրա առանձնահատկություններին: Այս դեպքում խնդիրներն ու նպատակները ձևակերպվում և դևվում են հետևյալ կերպ՝ ոչ թե ինչ սովորեցնել, այլ ինչի համար սովորեցնել, ինչպես սովորեցնել: Ի վերջո այս դեպքում ուսուցչի հիմնական ուշադրությունն ուղղված է ոչ այնքան ուսումնական նյութի,որքան աշակերտի և նրա ուսումնական գործընթացի վրա:Այսպիսով ուսուցման-ուսումնառության մեթոդը պայմանավորվում է նպատակով, որն իհարկե, պետք է հաշվի առնի ընդհանրապես մարդու,մասնավորապես երեխայի սովորելու հնարավորությունը, զարգացնելով վերջինիս կարողունակությունը, ձևավորելով արժեհամակարգ:

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՄԱՆ- ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՈՒսուցման- ուսումնառության նպատակի հիմնախնդիրը մանկավաժության մեջ միշտ էլ եղել ու մնում է կարևորագույններից մեկը: ՈՒսուցման նպատակը կախված հասարակության սոցիալտնտեսական պայմաններից և օրեցօր աճող պահանջներից, անընդհատ փոփոխվում է: Այսօր արդեն ժամանակավրեպ է առաջնորդվել ուսուցման նպատակին հասնելու ավանդական մեթոդներով; Սա պայմանավորված է այն բանով, որ աշակերտը /երեխան/ այսօր տեղեկատվություն / գիտելիք/ է ստանում ամենատարբեր և բազմաբնույթ : Ուսուցիչը, գիրքը,տետրը, գրատախտակն ու կավիճը դադարում են գիտելիքի միակ աղբյուր ու միջոց լինելուց: Հրապարակի վրա են համակարգչային տեխնիկան,հեռուստատեսությունը, ուսուցման տեսողական ու լսողական միջոցները տեսաերիզները և գործիքներ, որոնք արմատական փոփոխության են ենթարկում ուսուցման ողջ գործընթացը:

Սա միջոցների առումով; Մյուս կողմից ուսուցման- ուսումնառության կազմակերպման ավանդական ձևի՝ դասի ընթացքում էլ ցանկության դեպքում ուսուցումը հնարավոր է իրականացնել ոչ ավանդական , նորարական ձևերով: Այս բոլորից բացի աջաջին պլան է մղվում ստացած գիտելիքներն իրական կյանքում կիրառելու, գիտելիքներն ինքնուրույն լրացնելու կարողությունները, հմտությունները,կատարողական որակները:

Ուսուցում- ուսումնառությունըբարդ և դժվարինգործընթաց է,որին ներկայացվող արդիական պահանջները ենթադրում են բազմակողմանի, բազմափուլ և լուրջ ստեղծագործական աշխատանք:

2003թ.հրատարակված /Ինտեգրված թեմատիկ միավոր/ ձեռնարկում դիտարկված է ուսուցման հիմնական խնդիրները.

- Հաղորդել գիտելիքների որոշակի հանրագումար / պաշար/
- Ձևավորել այդ գիտելիքները կիրառելու կարողություններ.
- Սովորեցնել սովորել,
- Ձևավորել ստեղծագործական մտածողություն և կարողություններ,
- Ձևավորել հմտություններ.
- Ձևավորել քննադատական մտածողություն.

ԻՆՉՊԵ՞Ս ՍՈՎՈՐԵՑՆԵԼ

Դիտարկելով ժամանակակից ուսուցման հիմնական նպատակներն ու խնդիրները , որոնցով էլ պայմանավորված է ուցուցման մեթոդների և կազմակերպման ձևերի ընտրությունը, կդիտարկենք նաև, թե ինչպես սովորեցնել;
Եթե ակտիվ ուսուցում է ցանկացած իրավիճակ, երբ աշակերտները սովորում են շարժվելով և ինչ որ բան անելով, ապա պետք է նկատի ունենալ, և արտաքին երևացող ֆիզիկական ,և ներքին ՝ մտավոր շարժումը: Այս դեպքում ակտիվ ուսուցում է նաև այն, երբ սովորողները նստած գրասեղանի մոտ կարդում են, գրում կամպարզապես լսում
ուսուցչին:Երբ ակտիվ է ուսուցման գործընթացը, այն հնարավորություն է ընձեռում բացահայտել ու զարգացնել երեխայի մտավոր բոլոր ընդունակություններն ու ներքին ուժերը: Ակտիվ ուսուցման իրականացմանն են միտված ուսուցման ժամանակակիցտեսությունները:Դրանց թվին են պատկանում Հովարդ Գարդների բազմաբնույթ մտածողությոան տեսությունը, քննադատական, պրոբլեմային ուսուցումը, համագործակցային ուսուցումը, ուսուցման էվրիստիկ ձևը, աշակերտի ինքնուրույն աշխատանքը և այլն:

ՀՈՎԱՐԴ ԳԱՐԴՆԵՐԻ՝ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հարվարդի համալսարանի /ԱՄՆ/ պրոֆեսոր Հովարդ Գարդները գտնում էր, որ երեխան պետք է ներգրավվի ուսման մեջ իր բոլոր հնարավորություններով: Եվ քանի որ մարդուն հատուկ է ընկալել և խոսքի, և զննականության և տրամաբանական մտածողության, և ուրիշների հետ համագործակցելու և ինքն իր մեջ ամփոփելու միջոցով, ապա նա առաջարկում է ուսուցման մեջ ընդգրկել այդ բոլոր հնարավորությունները, ինչն էլ նպաստում է գործընթացի ակտիվությանը:

Այդ հնարավորություններն, ըստ Հ.Գարդների տասնմեկն են,: Գարդները դրանք պայմանականորեն անվանում է /մտածողություններ : Գարդներն